ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 դեկտեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

173
(3204)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈԽՄԱՐԶՊԵՏԻ ԿԱՐԻԵՐԱՆ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Իշխանության ներսում կադրային սովն ամեն անգամ ավելի ընդգծված է արտացոլվում, երբ ուսումնասիրում ենք պաշտոնյաների՝ իրենց հետ պաշտոնի բերած անձանց կենսագրությունը եւ ունեցվածքը:

Օրինակ՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը իր օգնական, ապա խորհրդական, իսկ այժմ տեղակալ է նշանակել Ջանիկ Բազեյանին, ով մինչ քաղաքական դաշտում հայտնվելը 4 տարի՝ 2014-2018 թվականներին, աշխատել է Ռուսաստանի Դաշնությունում եւ զբաղվել է անհատ ձեռներեցությամբ: Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանի ասած՝ «խոպանչի» է եղել:

2018 թվականից մինչեւ 2020 թվականը հարցական է, թե Բազեյանն ինչով է զբաղվել. կենսագրության այս 2 տարին բաց է թողնված:

2020 թվականից սկսվող կարիերայում Բազեյանը, երբեւէ պետական պաշտոն չզբաղեցնելով, վերադարձել է հայրենիք եւ միանգամից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում դարձել կոմիտեի նախագահի օգնական:

Իսկ այդ ժամանակ նախագահը ներկայիս մարզպետ Կարեն Սարգսյանն էր:

2021 թվականին, երբ Սարգսյանը նշանակվեց Գեղարքունիքի մարզպետ, Ջանիկ Բազեյանը տեղափոխվեց մարզպետարանի աշխատակազմ՝ շուրջ երեք տարի աշխատելով որպես մարզպետի օգնական: 2024 թվականին նա երկու ամսով անցավ խորհրդականի պաշտոնին, իսկ նույն տարվա մարտից նշանակվեց մարզպետի տեղակալ: Բազեյանի կենսագրության մեջ նշվում է, որ նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համակիր է, սակայն կուսակցության անդամ չէ:

Ինչ վերաբերում է փոխմարզպետի ունեցվածքին, ապա նրա կողմից ներկայացված 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրում նշված է, որ նա ունի հինգ անշարժ գույք՝ չորս հողամաս եւ մեկ անհատական բնակելի տուն, որոնք գտնվում են Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում: Բազեյանը ծնունդով հենց Ջրվեժից է: Հողամասերից երեքը նա նվիրատվություն է ստացել երեք անձանցից, որոնք, ըստ անվանումների, ամենայն հավանականությամբ իրեն հարազատ մարդիկ են:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, մի շարք արտախորհրդարանական ընդդիմադիր ուժեր պարբերաբար հանդիպումներ են ունենում՝ քննարկելու համապետական ընտրություններին ընդառաջ իրենց անելիքները: Մեր տեղեկությունների համաձայն՝ այդ ուժերն են «Հայ ազգային կոնգրես»-ը (ՀԱԿ), «Սասնա ծռեր»-ը, «Ապրելու երկիր»-ը, «Նժար» սահմանադրական շարժումը, «Հաղթանակ» կուսակցության նախագահ, քաղաքային պլանավորող Վիկտոր Մնացականյանը եւ այլք: «Մենք շատ ավելի մեծ թվով մարդկանց ու քաղաքական ուժերի հետ ենք հանդիպում: Կարծում եմ՝ ճիշտ չի լինի հիմա անուններ հրապարակելը ու հանդիպումներից մանրամասներ հայտնելը», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց «Նժար» սահմանադրական շարժման առաջնորդ Նինա Կարապետյանցը՝ հավելելով, որ ավելի ողջամիտ է գտնում այս իրավիճակում լռություն ու հանգստություն պահպանելը: Կարապետյանցը հանդիպումներից միայն նշում է, որ բազմաթիվ հարցերում ընդհանուր հայտարարի են եկել այն բոլոր ուժերի հետ, որոնք իսկապես արժեհամակարգ կրող են, պատկերացում ունեն, թե ինչպիսի փոփոխված, զարգացած, անվտանգ Հայաստանում կարող են ապրել: Մեր այն հարցին, թե քննարկում ունեցել են նոր ձեւավորված «Միասնության թեւեր» շարժման առաջնորդ Արման Թաթոյանի հետ, Կարապետյանցը չպատասխանեց: «Միասնական թեկնածուի մասին առայժմ վաղ է խոսել: Միայն կարող եմ ասել, որ «Նժար»-ի կողմից իմ թեկնածությունն են առաջարկել», - բացահայտեց Կարապետյանցը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Կոտայքի նախկին մարզպետ Կավալենկո Շահգալդյանի որդու՝ Հակոբ Շահգալդյանի վերաբերյալ որոշում է կայացրել եւ վերջինիս նկատմամբ կիրառել վարչական տույժ: Բանն այն է, որ հանձնաժողովը քննության է առել Infocom.am-ի՝ «Չարենցավանի համայնքապետարանը կառավարող խմբակցության հետ կնքել է 478 մլն դրամի պայմանագիր» վերտառությամբ հոդվածը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հակոբ Շահգալդյանը 2025 թվականի փետրվարի 5-ին եւ սեպտեմբերի 4-ին կնքել է կապալային աշխատանքների գնման պայմանագրեր «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հետ, որի գործադիր մարմինը եւ միակ սեփականատերը հանդիսացել է իր հետ գործնական հարաբերություններ ունեցող անձ՝ Չարենցավան համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Տարոն Եփրեմյանը: Փետրվարի 5-ին կնքված կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը կնքելուց առաջ Հակոբ Շահգալդյանի կողմից Հանձնաժողով չի ներկայացվել դրա կնքման փաստի վերաբերյալ հայտարարություն՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերեւույթ խախտում: Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 13-ի համապատասխան որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ: Հանձնաժողովը ծանուցել է Հակոբ Շահգալդյանին՝ հրավիրելով անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցելու վարչական իրավախախտման հիմքով արձանագրության կազմմանը, ինչպես նաեւ իրականացվող գործի քննությանը: Սակայն Շահգալդյանը ոչ մի կերպ չի ներկայացել Հանձնաժողով: Գործի քննությունն իրականացվել է նրա բացակայության պայմաններում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանը վերջին օրերին թիմին հանձնարարել է առավել ակտիվ զբաղվել Կաթողիկոսի տեղապահի հետ կապված հարցերով: Նույն աղբյուրների վկայությամբ՝ վարչապետը թիմակիցներին ասել է, որ առաջիկայում պետք է մշակվի եկեղեցու նոր կանոնագիրք, եւ տեղապահի հարցը վերջնական լուծում ստանա: Փաշինյանը շեշտել է, որ եկեղեցում, հոգեւորականության շրջանում անհրաժեշտ են իրական բարենորոգումներ, որպեսզի ապագայում չպարզվի, թե դեռ կան թեւեր, որոնք աջակցում են նախկին նախագահներին: Նշենք, որ ըստ կառավարության մեր աղբյուրի՝ Նիկոլ Փաշինյանը հատկապես չի ներում Կաթողիկոսի հայտարարությունն ի պաշտպանություն Ռոբերտ Քոչարյանի, երբ իշխանությունները նրան կալանավորեցին՝ մարտի 1-ին սահմանադրական կարգի տապալման գործի շրջանակում: Փաշինյանը չի ներելու նաեւ, որ Կաթողիկոսը թույլ է տվել՝ Բագրատ սրբազանը քաղաքական ուժեր ձեւավորի ու առաջնորդի: Առաջիկայում ավելի ուժեղ ռեպրեսիաներ են լինելու եկեղեցու եւ եկեղեցականների նկատմամբ: Մենք տեղեկացանք նաեւ, որ Մայր Աթոռում էլ որոշել են՝ հոգեւորականներն ու եպիսկոպոսները մի տեւական ժամանակ որեւէ հայտարարությամբ հանդես չեն գա, մինչեւ կհասկանան իրենց անելիքները:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՉԻ ՓՈԽՎԵԼ, ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակում «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի հետ: Զրույցը վերաբերել է քաղաքականության մեջ նրա առաջին քայլերին, հեղափոխության մեջ ունեցած դերակատարությանը, զբաղեցրած պաշտոններին եւ մի շարք այլ հարցերի:

Հարցազրույցի առաջին մասը «Ժողովուրդ» օրաթերթի երեկվա՝ 3203 համարում:

Մխիթար Հայրապետյան.

-Ինչ վերաբերում է հեղափոխության կայացման ընթացքում պաշտոնական ներգրավվածության մասին մտքերին՝դա իրականում ընդհանրապես չէր քննարկվում:

Առաջին խոսակցությունները պաշտոնների մասին սկսվեցին միայն մայիսի 9-ին, երբ վարչապետն արդեն ընտրված էր: Այդ ժամանակ հենց վարչապետն ասաց, որ պետք է համախմբվենք, ստանձնենք պատասխանատվություն եւ քաղաքական առաջնորդություն: Այսինքն՝պաշտոնների մասին խոսք է եղել միայն այն ժամանակ, երբ «Ոչ բռնի թավշյա հեղափոխությունը» արդեն կայացել, իրականություն էր դարձել:

-Պարոն Հայրապետյան, Դուք նշանակվեցիք սփյուռքի նախարար հեղափոխությունից հետո՝ բավականին երիտասարդ տարիքում, բայց այնուհետեւ նախարարությունը լուծարվեց: Այդ քայլը հիմա շատերի կողմից մեկնաբանվում է որպես հեղափոխության մասնակիցների (բացասական) վերաբերմունք սփյուռքի նկատմամբ: Համաձա՞յն եք այդ տեսակետին:

-Իհարկե՝ ոչ: Ես բազմիցս ասել եմ, որ դա վերաբերում էր կառավարման մոդելի իմաստավորմանը, ոչ թե վերաբերմունքին: Նախարարության գոյությունը կամ չգոյությունը չի կարող արտահայտել պետության վերաբերմունքը սփյուռքի հանդեպ: Պետության վերաբերմունքն արտահայտվում է գործերով, քաղաքականությամբ, իրականացվող ծրագրերով: Շատ ավելի կարեւոր արտահայտչամիջոցներ կան իրականում, որ պետությունը դրսեւորում է՝ ցույց տալու իր վերաբերմունքը:

Երբ այդ շրջանում գնացի Ազգային ժողով, «կրթության գիտության....» երկար անվանումը կրող այդ հանձնաժողովին եւ ԱԺ նախագահին ներկայացրի, որ մանդատի շրջանակում այդտեղ առաջին անգամ նախատեսվի նաեւ «սփյուռք»-ը, այսինքն՝ կրթության գիտության նախարարության անվան երկար հապավման մեջ ընդգրկվի նաեւ «սփյուռք» բաղադրիչը: Եվ այդ երկու «ս» տառերից մեկը՝ «սպորտ» եւ «սփյուռք», հենց նշածս «սփյուռք»-ը դարձավ: Սա հենց այդ ազդակներից էր՝ցույց տալու համար սփյուռքին, որ այստեղ վերաբերմունքի որեւէ փոփոխություն չկա: Պարզապես կառավարումը փոխվեց:

-Կա տեսակետ, որ սփյուռքի որոշ շրջանակներ նեղացած են իշխանությունից: Համաձա՞յն եք:

-Նայած՝ որ շրջանակների մասին է խոսքը: Կան շրջանակներ, որոնք հիմա ավելի սերտ են աշխատում Կառավարության հետ, քան երբեւէ: Եվ կան շրջանակներ, հատկապես տարբեր կուսակցություններին մոտ կանգնածները, որոնց դեպքում, այո, կապը որոշ չափով թուլացել է: Դա ինձ համար ցավալի է:

Իմ պատկերացմամբ՝ տարբեր համայնքներ, կազմակերպություններ պետք է մի կողմ դնեն քաղաքական կամ գաղափարական տարաձայնությունները եւ համախմբվեն Հայաստանի պետական շահի շուրջ: Մեզ պետք է ընդհանուր պետական գաղափարախոսություն, որից դուրս քաղաքական ճաշակները երկրորդական կլինեն:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՍՐԲԱԶԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ՝ ԱԱԾ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻՑ

Միքայել, Բագրատ եւ Արշակ սրբազանները երեկ նամակ են գրել ԱԱԾ մեկուսարանից.

«Արդեն պարզից էլ պարզ է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում է զինված բանդա, որը զբաղված է կիրակի օրերը եկեղեցիներ զավթելով եւ հավատացելոց իրավունքները կոպտորեն ոտնահարելով՝ իրենց սատանայական «պաշտամունքները» կատարելու համար:

Այս հանցավոր բանդան գլխավորում է վարչապետի պաշտոն զբաղեցնող, անհայտ դավանանքի տեր մի անձ ով զինված մարդկանց ուղեկցությամբ, բացահայտ եւ անթաքույց լկտիությամբ թափանցում է իր իրավասության տակ չգտնվող եկեղեցու սակրալ տարածքներ՝խախտելով կրոնական ազատության սահմաններն ու սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

Նողկալի է, որ սույն բանդային նախարարներից, պատգամավորներից, զանազան արկածախնդիրներից բացի, միացել են նաեւ իրենց եռակի օծումը ոտնահարված եւ մերժած «հոգեւորականներ», որոնք իրենց սույն քայլով արժանացել են Աստծու դատաստանին:

Սույն հանցավոր զինված բանդայի դեռեւս ազատության մեջ գտնվելը խոսում է, իբրեւ թե, իր սուվերենությունը «գտած», սակայն իրականում կորցրած պետականության փշրանքների լիակատար զավթման մասին հանցագործ սուբյեկտների կողմից:Սակայն վստահ ենք, պետականությունը կվերականգնվի, իսկ հանցագործները կգբաղեցնեն այն տեղը, ուր ապօրինի կերպով գտնվում ենք այսօր մենք խղճի կալանավորներս:

«Եթե Աստված մեր կողքին է, ո՞վ կարող է լինել մեզ հակառակ»:

Հաղթանակի վստահությամբ՝
Միքայել արքեպիսկոպոս Աջապահյան
Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան
Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյան»:

«ԳՈՐԾԻ ԱՆԱՉԱՌ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ ԿԱ». ՓԱՍՏԱԲԱՆ

Երեկ՝ Մարդու իրավունքների միջազգային օրվան ընդառաջ, փաստաբան Գայանե Պապոյանը գրառում է արել. «Այսօր, երբ ամբողջ աշխարհում նշվում է Մարդու իրավունքների միջազգային օրը, Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ անտեսված այն հիմնարար սկզբունքը, ըստ որի՝անձի ազատությունն ու արդար դատաքննության իրավունքը պետք է պաշտպանված լինեն առանց բացառության: Այն, ինչ տեղի է ունեցել եւ շարունակում է տեղի ունենալ Դավիթ Համբարձումյանի նկատմամբ, ըստ էության, հակասում է այդ սկզբունքներին», -գրել է փաստաբան Գայանե Պապոյանը:

«Մարդու իրավունքների օրը չի կարող լինել ձեւականություն, երբ իրական մարդկանց ազատություններն ու արժանապատվությունը նստվածքի նման մնում են դատական համակարգի անկատարությունների ներքո:

Այսօր առավել քան երբեւէ կարեւոր է բարձրաձայնել, որ յուրաքանչյուր սահմանափակում, այդ թվում՝ ազատազրկումը, պետք է հիմնվի բացառապես օրենքի վրա, ոչ թե քաղաքական կամ անձնական մոտիվների: Դավիթ Համբարձումյանի վերաբերյալ կայացված դատավճիռը պետք է ենթարկվի անաչառ, թափանցիկ եւ շտապ վերանայման, իսկ նրա իրավունքների կոպտագույն խախտումները՝ անհապաղ վերացվեն:

Մարդու իրավունքների միջազգային օրը պարտադրում է ոչ թե գեղեցիկ հայտարարություններ, այլ գործողություններ: Իսկ գործողությունը, այս դեպքում մեկն է՝ վերականգնել Դավիթ Համբարձումյանի իրավական վիճակն օրենքի պահանջներին համապատասխան եւ ապահովել նրա իրավունքների լիարժեք պաշտպանությունը»,-գրել է փաստաբանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդարադատության նախարարությունն առաջարկում է ՔԿԱԳ-ի կողմից մատուցվող մի շարք ծառայությունների դրույքաչափերի փոփոխություն իրականացնել: Ահա դրանցից մի քանիսը: «Պետական տուրքի մասին» օրենքում կատարվող փոփոխություններով նախատեսվում է բարձրացնել ամուսնալուծության գրանցման ժամկետը լրացուցիչ վճարի դիմաց կրճատելու ծառայության դիմաց սահմանված տուրքը՝նպատակ ունենալով խթանել ընտանիքի պահպանումը:

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ 18 տարին լրացած անձն իրավունք ունի փոխելու անունը, որը ներառում է անունը, ազգանունը, հայրանունը: Անվան փոփոխման գրանցումը թույլատրվում է առանց այն հիմնավորող պատճառների: Ներկա պահին գործող կարգավորման պարագայում բազմաթիվ են դեպքերը, երբ անձը կրկնակի դիմում է ներկայացնում՝ փոխելու իր տվյալը՝ կարճ ժամանակ անց վերադառնալով նախկին տվյալին կամ անվան փոխման դիմում է ներկայացնում՝ իր տվյալում փոխելով ընդամենը մեկ տառ: Առաջարկվում է բարձրացնել անվան փոխման համար սահմանված պետտուրքի դրույքաչափը:

Օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ քաղաքացիական կացության ակտային գրանցման համար ներկայացվող փաստաթղթերն առավել շատ ու բազմազան են եւ ուսումնասիրության տեսանկյունից՝ աշխատատար: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիների վերաբերյալ ամուսնության պետական գրանցման համար կատարվող աշխատանքի ծավալը եւ դրան հատկացվող ժամանակը զգալիորեն զիջում է օտարերկրյա պետության քաղաքացիների վերաբերյալ ամուսնության գրանցման համար կատարվող աշխատանքի ծավալին ու տրամադրվող ժամանակին, հետեւաբար՝ նպատակահարմար է օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ միայն ամուսնացողներից մեկի ՀՀ քաղաքացի հանդիսանալու դեպքում ամուսնության գրանցման համար սահմանել պետական տուրք: Նույն հանգամանքից ելնելով՝ նպատակահարմար է օտարերկրյա քաղաքացիների համար հայրություն (մայրություն) ճանաչելու համար բազային տուրքի չափը սահմանել բազային տուրքի երեսնապատիկի չափով, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխայի որդեգրման մասին ակտային գրանցման համար սահմանել պետտուրք՝ բազային տուրքի երկուհարյուրապատիկի չափով:

Մյուս կողմից, պետության համար ռազմավարական կարեւորություն ունեցող ոլորտներում օտարերկրյա քաղաքացիների ներգրավման դեպքերում եւս կբարձրացվեն պետտուրքերը:

Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ փոփոխություն կատարելու գործառույթը հիմնականում կիրառվում է դիմողի գրանցման եւ անձը հաստատող փաստաթղթում առկա անհամապատասխանության պարագայում՝ քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ անձի անհատական տվյալները նրա անձը հաստատող փաստաթղթին համապատասխանեցնելու նպատակով: Մինչդեռ, քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում, լրացում կատարելու արդյունքում հաճախ առաջանում է անձը հաստատող փաստաթղթի փոփոխության անհրաժեշտություն: Տվյալ դեպքում անձը կստանա ընտրության հնարավորություն՝ իր վերաբերյալ քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ իր տվյալները համապատասխանեցնելու:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱԿՈՒՆՑԸ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԻ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավոր խորհրդական դոկտոր Լիլիթ Մակունցը նշանակվել է Հայաստանի Ամերիկյան Համալսարան (ՀԱՀ) Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդում:

Նա այստեղ փոխարինելու է հանգուցյալ դոկտոր Յուրի Սարգսյանին, որը ՀԱՀ համահիմնադրիրներից էր, Խորհրդի անդամը եւ Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանի նախկին ռեկտորը:

Ամերիկյան համալսարանի տարածած հաղորդագրության մեջ մասնավորապես, նշված է. «Դոկտոր Մակունցը Խորհուրդ է բերում Հայաստանի պետական հատվածում ծառայության լայն փորձառություն: Նա ծառայել է որպես Մշակույթի նախարար 2018-2019 թվականներին, այնուհետեւ ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր եւ դարձել «Իմ Քայլը» խորհրդարանական դաշինքի մեծամասնության ղեկավարը: 2021 թվականին նշանակվել է Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Մակունցն ունի բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան եւ դասավանդել է Հայ-ռուսական համալսարանում, որտեղ նրա աշխատանքը կապել է դիսկուրսի վերլուծությունը, լեզուն, սոցիոլինգվիստիկան, ճանաչողական լեզվաբանությունը եւ քաղաքական հաղորդակցությունը»:

Խոսելով իր նոր առաքելության մասին՝ Մակունցն ասել է, որ ակնկալում է օգտագործել իր փորձի այն հատվածը, որը ձեւավորել է իրեն ոչ միայն որպես պետական ծառայող, այլեւ որպես անձ:

Հիշեցնենք, որ Հայաստանի ամերիկյան համալսարանի 45 դասախոսներ եւ աշխատակիցներ 2020 թվականի հենց այսօ օրերին հայտարարություն էին տարածել, որով պահանջում են Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետք է լինի բոլոր տեսակի ապրանքների շրջանառություն:

Այս մասին Ալեն Սիմոնյանն ասաց երեկ՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ կազմակերպված միջոցառման շրջանակներում ունեցած ճեպազրույցի ժամանակ:

«Չեմ ուզում կենտրոնանանք միայն նավթամթերքի վրա: Բոլոր տեսակի ապրանքների շրջանառություն պետք է լինի եւ մենք դրան պատրաստ ենք: «Խաղաղության խաչմերուկ»-ը եւ այն խաղաղությունը, որի վերաբերյալ խոսում ենք, հենց դրա մասին է՝ բոլոր տեսակի ապրանքների մասին է խոսքը»,- ասաց Սիմոնյանը՝ համոզմունք հայտնելով, որ Հայաստանը պետք է օգտվի էներգակիրների բոլոր հնարավոր այլընտրանքներից՝ հնարավորություն տալով, որ Ադրբեջանը եւս իր շահն ու հետաքրքրությունն ունենա ՀՀ տարածքով դեպի Նախիջեւան կամ Թուրքիա նույնպես արտահանելու:

ՀԱՏՈՒԿ ՆՎԵՐ Է ՈՒՂԱՐԿՎԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ 2 ՀՈՒՇԱՆՎԵՐ ՍՈՒՐ Է ՍՏԱՑԵԼ

ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 35-րդ նիստին առցանց ձեւաչափով մասնակցելուց հետո ՀՀ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի համար հատուկ նվեր է ուղարկվել Հայաստան:

Նվերն ուղարկվել է տրանսպորտային միջոցով, սույն թվականի հոկտեմբերի 21-ին:

Այն արժեցել է 60 հազար դրամ: Նվերը եղել է կաշեպատ պատյաններով հուշանվեր 2 սուր:

Նվիրող կողմը եղել է Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Հաբիբուլլո Վոխիդզոդան:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

1. պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

2. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

3. կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

4. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Բացի դրանից, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում:

40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման՝ բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի:

Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

Հավելենք նաեւ, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացմանը վերաբերող, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ, չեն կարող ընդունել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը դեկտեմբերի 12-ին արտահերթ նիստ է հրավիրել:

Մենք տեղեկացանք, որ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը կրկին ԱԺ է գալու՝ ներկայացնելու «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի նախագիծը, որը պետք է ներկայացվի երկրորդ ընթերցման:

Բանն այն է, որ հայրենի կառավարության առաջարկով դեկտեմբերի 16-ին ԱԺ-ում արտահերթ նիստ է հրավիրվել, ու Ավանեսյանը պետք է այս նախագիծը եւս ներկայացնի երկրորդ ընթերցման համար:

Հանձնաժողովում դրական եզրակացություն ստանալուց հետո նախագիծը կընդգրկվի ԱԺ օրակարգ: Նշենք, որ նախագծի հարակից զեկուցողը ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հռիփսիմե Հունանյանն է:

Հավելենք, որ ըստ նախագծի՝ առողջության ապահովագրության ներդրմամբ 2026 թ.-ի ընթացքում առաջին փուլով համակարգում ներառվելու են 65+ տարիքի անձինք, եւ նրանց ապահովագրավճարը փակելու է պետությունը:

Ավանեսյանը ներկայացրել էր նաեւ, որ համակարգի ներդրման այդ փուլին մասնակցության անհրաժեշտ պայմաններն են.

1. ՀՀ քաղաքացիություն,

2. 183 օրից ավելի ՀՀ-ում բնակություն (ռեզիդենտություն):

65 + տարիքի անձինք կստանան ապահովագրություն՝ անկախ նրանից՝

ա/ հաշմանդամության կամ ֆունկցիոնալության գնահատման համակարգով կարգ ունեն, թե ոչ,

բ/ աշխատում են եւ ունեն եկամուտ, թե ոչ,

գ/ քրոնիկ հիվանդություններ ունեն, թե ոչ

դ/ սոցիալական որեւէ խոցելի խմբի մեջ ներառված են, թե ոչ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՔՈՅԱՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Ռուստամ Բաքոյանը հրաժարվում է կատարել Դատարանի վճիռը:

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը իմ դիմումով նախաձեռնել է Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի ստեղծման գործընթացը՝ քննության առարկա դարձնելու համար ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ռուստամ Բաքոյանի վարքագիծը, որը դրսեւորվել է ոչ միայն Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում՝ Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուների քննարկման ժամանակ դրսեւորած պահվածքով, այլեւ այդ կապակցությամբ Դատարանի կողմից կայացված օրինակ ուժի մեջ մտած վճիռը չկատարելու հանգամանքով, որի կապակցությամբ ես հաղորդում եմ ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին եւ Ազգային ժողովի երեք խմբակցություններին:

Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցությունը պատրաստակամություն է հայտնել աջակցելու էթիկայի հարցերով հանձնաժողովի ստեղծման գործընթացին»:

ԵՐԿԿՈՂՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին ընդունել է Հայաստանում Իրանի նորանշանակ դեսպան Խալիլ Շիրոզլամիին՝ նախքան նրա Երեւան մեկնելը:

Այս մասին հայտնում է IRNA գործակալությունը:

Հանդիպման ընթացքում նախարարն ընդգծել է Իրանի եւ Հայաստանի միջեւ տարբեր ոլորտներում համագործակցությունն ամրապնդելու համար բոլոր հնարավորությունների օգտագործման անհրաժեշտությունը:

Դեսպանը ներկայացրել է իր ծրագրերը՝ բարիդրացիական քաղաքականության շրջանակներում երկու հարեւանների միջեւ հարաբերությունները ամրապնդելու վերաբերյալ:

Հաջողություն մաղթելով նոր դեսպանին՝ Արաղչին Իրանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները որակել է քաղաքակրթական եւ պատմական:

Նախքան Հայաստանում Իրանի դեսպան նշանակվելը Շիրոզլամին զբաղեցրել է Իրանի արտաքին գործերի նախարարության Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի ղեկավարի՝ հետազոտությունների եւ ուսումնասիրությունների գծով տեղակալի պաշտոնը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԲԱՔՎՈՒՄ ԿԽՄԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԿԱՐՈՂ Է ԿԵՂԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի Բաքվի գրասենյակը դադարեցնում է իր գործունեությունը: «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի» ղեկավար, ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ, իրավաբաց Միրանուշ Սահակյանը հայտնել էր, որ այս տարվա սեպտեմբերից Կարմիր խաչը այլեւս ներկայություն չի ունենալու Ադրբեջանում: ArmLur.am-ը գերիների առողջական վիճակի, նրանց եւ հարազատների միջեւ կապի հնարավորության մասին զրուցել է Միրանուշ Սահակյանի հետ:

-Տիկին Սահակյան, Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործունեության դադարեցման մասին լուրերը հաստատվեցին: Այժմ ինչպե՞ս է կազմակերպվելու հայ գերիների եւ նրանց ընտանիքների միջեւ կապը:

-Այս պահին առկա է միայն հեռախոսային կապ, որը ապահովում է ադրբեջանական կողմը՝ իր քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների միջոցով: Սակայն նամակագրությունը, փոխանցումները, ինչպես նաեւ հանձնուքներ ուղարկելու հնարավորությունը, որոնք նախկինում իրականացվում էին Կարմիր խաչի միջոցով, լիովին բացառվել են:

Ամենակարեւոր խնդիրը այն է, որ գերիներն այսօր զրկված են արտաքին աշխարհի հետ անմիջական շփումներից: Միջազգային վերահսկողությունը նրանց պայմանների, հոգեբանական վիճակի, հիգիենիկ պայմանների, սննդի եւ այլնի վերաբերյալ ուղղակի բացակայում է. սա մեծ ռիսկեր է ստեղծում: Եթե գերիները խոշտանգվեն կամ բռնության ենթարկվեն, այդ բոլոր դեպքերը կմնան չբացահայտված ու չպատժված:

-Այժմ նրանց առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ չունե՞ք:

-Վերջին ստուգելի տեղեկությունները Վիգեն Էուլջեքջյանի մասին են: Հեռախոսազանգի ընթացքում նա կնոջը հայտնել էր իր ծայրահեղ ծանր վիճակի մասին: Քանի որ խոսակցությունը ձայնագրվել էր, տեղեկատվությունը ստուգելի էր: Նա հայտնել էր, որ զրկված է սննդից, առողջական վիճակը ծանր է, ձեռք է բերել հաշմանդամություն, իսկ համապատասխան պայմաններ կամ անհրաժեշտ սարքավորումներ պարզապես ստեղծված չեն:

-ՄԻԵԴ-ն ամիսներ առաջ որոշում էր կայացրել տեղեկատվության տրամադրման վերաբերյալ: Ի՞նչ փուլում է այս գործընթացը:

-ՄԻԵԴ-ը տեղեկատվություն է պահանջել Ադրբեջանի կառավարությունից՝ թե՛ միջպետական, թե՛ անհատական գործերով: Ադրբեջանը խնդրել է ժամկետի երկարաձգում, դատարանը լրացուցիչ ժամանակ է տվել, որը արդեն սպառվել է: Մինչ այս պահը որեւէ տեղեկություն չենք ստացել եւ սպասում ենք դատարանի նամակագրությանը:

-Ակնկալո՞ւմ եք, որ Ադրբեջանը կներկայացնի այդ տվյալները, թե՛ կրկին կձգձգի գործընթացը:

-Կարծում եմ՝ նրանք կփորձեն որքան հնարավոր է երկար ձգձգել, բայց վերջում, հավանաբար, կտրամադրեն նվազագույն տեղեկատվություն՝ պարզապես ՄԻԵԴ-ի պահանջը ձեւականորեն կատարելու համար: Սակայն փորձը ցույց է տալիս, որ այդ տեղեկությունները հաճախ կեղծված են: Ադրբեջանը կազմակերպում է միայն անունով «զննություններ», որոնցով փորձում է ներկայացնել, թե գերիների առողջական վիճակը նորմալ է, մինչդեռ իրական պատկերը լրիվ այլ է:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2024 թվականի հունվարի 31-ին Է.Հ.-ի եւ Ա.Կ.-ի միջեւ դպրոցում տեղի ունեցած լեզվակռվից հետո Է.Հ.-ի հայրը որոշել է արարքի համար պատժել Ա.Կ.-ին:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Է.Հ.-ի հայրը՝ Ա.Հ.-ն երկու անձի հետ այցելել է Ա.Կ.-ի բնակարան, որտեղ վերջիններս, լրացնելով մեկը մյուսի գործողությունները, ձեռքերով եւ ոտքերով հարվածներ են հասցրել Ա.Կ.-ի մարմնի տարբեր մասերին եւ հայհոյանքներ հնչեցրել:

Այնուհետեւ, հետագայում իրենց գործողությունները որպես հանգիստ խոսակցություն ներկայացնելու նպատակով՝ Ա.Հ.-ն նաեւ դաստիարակչական բնույթի խոսակցություն է ունեցել Ա.Կ.-ի հետ, որի ընթացքում պարտադրել է նրան՝ ներողություն խնդրել Է.Հ.-ից:

Վերոգրյալ գործողությունների հետեւանքով, Ա.Կ.-ին պատճառվել է հոգեկան ուժեղ տառապանք:

Նախաքննության ընթացքում երկու անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից անչափահասի նկատմամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), իսկ մեկ անձի նկատմամբ՝ 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասի նկատմամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

Դեկտեմբերի 9-ին՝ ժամը 2:30-ին Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, չվերթի հաշվառումից հետո ձերբակալվել է օտարերկրյա քաղաքացի 35-ամյա տղամարդ:

Այս տարվա փետրվարի 4-ից խարդախության մեղադրանքով նա հետախուզվում էր Իրանի Իսլամական Հանրապետության ինտերպոլի կողմից: Տղամարդու նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Նրա հայտնաբերման մասին տեղեկացվել է Հայաստանում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյին:

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԻՐԱՑՈՒՄ

Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները ձեռնարկած միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 6-ի գիշերը՝ ժամը 3-ի սահմաններում, Հարավարեւմտյան Բ-2 թաղամասի շենքերից մեկի մոտ հայտնաբերել, թմրամիջոց իրացնելու կասկածանքով Ոստիկանության Գվարդիայի գործընկերների հետ համատեղ ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ 17-ամյա երկու աղջիկների:

Անձնական խուզարկությամբ նրանց մոտ հայտնաբերվել է 64 փաթեթ՝ ընդհանուր 61,19 գրամ քաշով: Պարզվել է, որ նրանք 16 փաթեթ արդեն տեղադրել էին Շենգավիթ եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում:

Կազմված փաստաթղթերը եւ ձերբակալվածները ներկայացվել են նախաքննական մարմին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Դեկտեմբերի 9-10-ը հանրապետությունում բացահայտվել է 116 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

38 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,

11-ական դեպք՝ ֆիզիկական ներգործության, խարդախության,

7 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության,

6 դեպք՝ հոգեկան ներգործության,

5-ական դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու, թմրանյութի հայտնաբերման,

3-ական դեպք՝ գույքը ոչնչացնելու կամ վնասելու, անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումքերի կամ ապրանքների շրջանառության, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման,

2-ական դեպք՝ ավտոմեքենայի գողության, խուլիգանության, բուժաշխատողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության, հետամտելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու եւ այլ դեպքեր:

Բացահայտվել է շորթման, թմրանյութի իրացման, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կամ տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ հափշտակելու, շորթելու, ոչնչացնելու, վնասելու կամ թաքցնելու, սառը զենք կրելու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է 2 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության:

1-ական դեպք՝ սպանության փորձի, համակարգչային հափշտակության, խարդախության, կողոպուտի:

Հայտնաբերվել է 12 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 2-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 1 դեպք:

ԶԵՆՔ–ԶԻՆԱՄԹԵՐՔ

Գեղարքունիքի մարզի պարեկները Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհի 58-րդ կմ-ին ստուգման նպատակով կանգնեցրել են «Նիսան» մակնիշի մի մեքենա: Ստուգման ընթացքում վարորդը գրպանից փաթեթներ է նետել: Նա ձերբակալվել է: Տավուշի մարզի Կողբ գյուղի բնակիչ 34-ամյա վարորդը տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մոխրացած հետքերով գլանակ, ինչպես նաեւ ոտքին ամրացված է եղել վարչական հսկողության սարք:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Դեպքի վայրում կատարված զննությամբ հայտնաբերվել են ատրճանակ՝ լիցքավորված 3 փամփուշտով, սպիտակ գույնի բյուրեղանման, բուսական եւ մուգ գույնի փոշենման զանգվածներով փաթեթներ ու 11 դեղահաբ:

Կողբ գյուղի 34-ամյա բնակիչը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 9-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 116 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ՉԻ ՀԱՅՏՆԵԼ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ

Դեկտեմբերի 1-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մեր թղթակիցը տեղեկատվական հետեւյալ հարցումն է կատարել. «Դեկտեմբերի 1-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում քանի՞ թափուր հաստիք կա, ի՞նչ հաստիքներ են դրանք, ի՞նչ է արվում դրանք լրացնելու համար: Դեկտեմբերի 1-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող առողջապահական հիմնարկներում քանի՞ թափուր հաստիք կա, ի՞նչ հաստիքներ են դրանք, ի՞նչ է արվում դրանք լրացնելու համար»:

Մարզպետի աշխատակազմից հետեւյալ պատասխանն է ստացվել. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության դպրոցներում առկա ուսուցչի թափուր տեղերի մրցույթների հայտարարությունները տեղադրվում են ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքերում: Դրանք լրացվում են սահմանված կարգով / ԿԳՄՍ նախարարի 18.02.2021թ. Ն-22 հրաման/: Բժշկական կազմակերպությունների, այդ թվում՝ նաեւ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության հիմնարկների թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ առողջապահության նախարարության կայքէջում»:

Անհասկանալի է, թե Տավուշի մարզպետն ինչու է խուսափել մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում եւ առողջապահական հիմնարկներում առկա թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը հայտնելուց: Մարզպետի աշխատակազմն անմիջականորեն միայն այդ 2 ոլորտներն է կառավարում, այն էլ համատեղ՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ առողջապահության նախարարության հետ: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքի հայտարարությունների բաժնում 2025 թվականին վերաբերող հայտարարություններ կան միայն Դեղձավանի հիմնական դպրոցում «Մաթեմատիկա» առարկայի (10 դասաժամ), Բերդավանի միջնակարգ դպրոցում «Հայոց լեզու եւ գրականություն» առարկայի (22 դասաժամ) եւ Վերին Ծաղկավանի միջնակարգ դպրոցում 6 առարկաների ուսուցիչների թափուր տեղերի մասին: Մարզպետի աշխատակազմի ինտերնետային կայքում տվյալներ չկան մարզի հանրակրթական դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերը զբաղեցնելու մրցույթների արդյունքների, ուսուցիչների թափուր տեղերը այդ կերպ համալրելու վերաբերյալ: Մեր թղթակիցը Տավուշի մարզպետարանից տեղեկացել է, որ մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 76 հանրակրթական դպրոցներից 16 տնօրենի հաստիքը ներկայումս թափուր է. կարելի է ենթադրել, որ այդ դպրոցներում ուսուցիչների թափուր հաստիքները շատ ավելի են: Թափուր հաստիքներ կան նաեւ Տավուշի գյուղերի առողջապահական հիմնարկներում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

3,2 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամանորը մոտենում է եւ ամանորյա պետական գնումները ակտիվանում են: Սեւանի համայնքապետարանը ամանորյա տոնածառի տեղադրման եւ հարակից տարածքի զարդարման ծառայություններ համար 3 մլն 200 հազար դրամ արժողությամբ պայմանագիր է կնքել «Ռիկոլ-Էդգա» ՍՊԸ-ի հետ:

Պայմանագրով սահմանված է հետեւյալը.

«Սեւանի համայնքապետարանի հարակից տարածքում նախօրոք պետք է հավաքել բեմ եւ դրա վրա տեղադրել 7 մետր բարձրությամբ ամանորյա տոնածառ, այն զարդարել լույսերով եւ ամանորյա խաղալիքներով: Բեմը, համայնքապետարանի շենքի ճակատային մասը եւ հրապարակի աջ եւ ձախ կողմերը զարդարել ամանորյա լույսերով, լուսային էֆեկտներով, ամանորյա խաղալիքներով:

Տոնածառի եւ հարակից տարածքի զարդարման ոճը, օգտագործվելիք լույսերը, լուսային էֆեկտները կատարել պատվիրատուի էսքիզներով», - ասվում է պայմանագրում:

Ամանորյա զարդարման համար անհրաժեշտ տոնածառի բոլոր մետաղական կոնստրուկցիաները, զարդանախշերը, լուսային էֆեկտները, խաղալիքները եւ լույսերը պայմանագրի կատարողն ինքն է ձեռք բերելու:

Պայմանագրում ներառված է նաեւ տոնակատարություններից հետո գույքի հավաքումն ու հանձնումը Սեւանի համայնքապետարանի տնօրինմանը»:

Հետաքրքիրն այն է, որ այս ընկերությունը մասնակցություն ունի միայն Սեւանի համայնքապետարանի գնումներին, եւ միայն այս տարի է, որ մեկ անգամ պայմանագիր է կնքել «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ-ի հետ: Ընկերության իրական շահառուն եւ 100 տոկոս բաժնետերը Կորյուն Աբրահամյանն է, իսկ ընկերությունը հիմնվել է 2010 թվականին:

Նմանատիպ ծառայությունը որոշ դետալներով կրկնվել է նաեւ նախորդ տարի, համաձայն բնութագրի, սակայն, այդ պայմանագիրն արժեցել է 2,5 մլն դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԱԽԱՐԱՐԸ՝ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Սուր շնչառական վարակներով պայմանավորված՝ ՀՀ առողջապահության նախարարությունն իրականացնում է հիվանդացության, առողջության առաջնային պահպանման հաստատություններ ու շտապօգնություն դիմելիության աճի, ինչպես նաեւ մանկապարտեզներում ու դպրոցներում բացակայությունների թվի ամենօրյա մոնիթորինգ:

Այս մասին նշել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ «Ֆեյսբուք»-ի իր էջում հրապարակած տեսանյութում անդրադառնալով սուր շնչառական վարակներով պայմանավորված իրավիճակին ու ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

«Ընդհանուր դպրոցների կամ մանկապարտեզների դասապրոցեսը կանգնեցնելու իրավիճակ չունենք, սակայն մենք ունենք աշխատանքի շատ հստակ մեթոդ ու գծագրված մեխանիզմ. այն դասարանները, որտեղ բացակայությունների թիվը 20 տոկոսից ավելի է, կարող են անցնել հեռավար ուսուցման: Մենք կրթության գործընկերների հետ ամենօրյա կապի մեջ ենք, եւ այս հետմոնիթորինգի արդյունքներով դասարաններն ինքնուրույն կարող են անցնել հեռավար դասապրոցեսի, որ մի կողմից պաշտպանենք մեր երեխաների առողջությունը, մյուս կողմից հնարավորություն տանք, որպեսզի վարակի ցուցանիշները նվազեն այդ դպրոցներում, բայց մյուս կողմից էլ՝ ընդհանուր հանրապետությունում չխաթարենք դասապրոցեսը»,-ընդգծել է նախարարը՝ հավելելով, որ համաճարակաբանական իրավիճակին համապատասխան գործիքները կիրառվում են ըստ ցուցման:

Ավանեսյանը հավաստիացրել է, որ ընդհանուր դասապրոցեսի վերաբերյալ որոշում պահանջող համաճարակաբանական իրավիճակի առկայության դեպքում այն կկայացվի:

Նախարարը համապատասխան ախտանշաններ չունեցող քաղաքացիներին կրկին կոչ է արել օր առաջ պատվաստվել սուր շնչառական վարակների դեմ:

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ

«Մարդու իրավունքների օր, եւ Հայաստանում մարդու իրավունքների իրական վիճակը: Նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունում, նոր խափանման միջոցների նման ծավալի նախատեսում, սակայն հանրային հնչեղություն ունեցող բոլոր գործերով բացառապես կալանքի կիրառում»: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է փաստաբան Արամ Վարդեւանյանը:

«Հենց այս հանրային տվյալները հստակ են դարձնում, որ Հայաստանում կալանքը չի հանդիսանում խափանման միջոց, կալանքը չի վերաբերում անձի պատշաճ վարքագծի ռիսկերի զսպմանը, այլ բացառապես ռեպրեսիվ, ավտորիտար գործիք է: Ազգային բարերար Սամվել Կարապետյանը 2025 թվականի հունիսի 18-ից ակնհայտորեն ապօրինի կալանավորված է: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ժ. Մելիքսեթյանի կողմից գրավոր ընթացակարգով քննության է առնվում մեր կողմից ներկայացված բողոքները եւ հենց այսօր լրանում է գրավոր դիրքորոշումներ ներկայացնելու ժամկետը, իսկ դեկտեմբերի 11-ին դատարանի կողմից պետք է կայացվի դատական ակտը: Այս ժամանակահատվածում մի շարք լրացուցիչ գրավոր բացատրություններ եւ դիրքորոշումներ ներկայացվել են Վերաքննիչ դատարան, որոնք հերքում են որեւէ ձեւով կալանքի պահպանման իրավական հնարավորությունը:

Իրավական տեսանկյունից անհերքելի փաստ է, որ Սամվել Կարապետյանը ենթարկվում է ամենաինտենսիվ քաղաքական հետապնդման, շուրջ վեց ամիս ապօրինի կալանավորված է, եւ այս ողջ ժամանակահատվածում զրկված է նույնիսկ արդար դատաքննության նվազագույն երաշխիքներից: Նշվածի փաստացի ոչ իրավական հիմքերն արտացոլված են ֆեյսբուքյան արդարադատության տիրույթում 2025 թվականի հունիսի 17-ին գործադիր իշխանության ղեկավարի գրառումներում» - գրել է փաստաբանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար, 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ՕԳՏՎԵԼ ՍՈՑՑԱՆՑԵՐԻՑ

Ավստրալիայում ուժի մեջ է մտել օրենք, ըստ որի՝ 16 տարեկանից փոքր անձանց արգելվում է մուտք գործել սոցիալական ցանցեր:

Երկրի ինտերնետ-կարգավորողի (eSafety) հայտարարության մեջ նշված է, որ դեկտեմբերի 10-ից Ավստրալիայում գործող սոցիալական ցանցերը պարտավոր են ապաակտիվացնել երեխաների եւ դեռահասների օգտահաշիվները:

«Այսօրվանից սոցիալական ցանցերում գործում են սահմանափակումներ. օգտահաշիվ ունենալու համար տարիքը պետք է լինի 16 եւ ավելին: Դա զարգացման կարեւոր փուլում կապահովի պատանի ավստրալացիների համացանցային անվտանգությունը», - ասվում է կարգավորողի հայտարարության մեջ:

eSafety-ն պարզաբանել է, որ արգելքը վերաբերում է Facebook-ին, Instagram-ին, Kick-ին, Reddit-ին, Snapchat-ին, Threads-ին, TikTok-ին, Twitch-ին, X-ին եւ YouTube-ին:

«Նրանք պարտավոր կլինեն ձեռնարկելու ողջամիտ քայլեր՝ 16 տարեկանից փոքր ավստրալացիներին արգելելու՝ ունենալ օգտահաշիվներ իրենց հարթակներում, սակայն երեխաներն ու դեռահասները նախկինի նման կկարողանան դիտել հանրային հասանելի կոնտենտը սոցիալական ցանցերում, որի համար գրանցում չի պահանջում օգտահաշվում», - նշել է կարգավորող մարմինը՝ ընդգծելով, որ պատանիները նաեւ կկարողանան կապի մեջ մնալ ընկերների հետ՝ օգտագործելով օգտահաշիվները հաղորդագրությունների փոխանակման հավելվածներում եւ առանց տարիքային սահմանափակման հարթակներում:

ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

ԵՄ-ի անդամ երկրների մշտական ներկայացուցիչները համաձայնեցրել են Ռուսաստանի դեմ նոր պատժամիջոցների սահմանումը: Այդ մասին դեկտեմբերի 10-ին հաղորդել են եվրոպական լրատվամիջոցները:

Նրանց տվյալներով, մասնավորապես պլանավորվում է սահմանափակումներ մտցնել Ռուսաստանից նավթի փոխադրման հետ կապված ինը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նկատմամբ: Բացի այդ, պատժամիջոցների ցուցակում կընդգրկվի եւս 43 նավ:

Եվրոպական ԶԼՄ-ների տվյալներով՝ պատժամիջոցները, ի թիվս այլ բաների, կվերաբերեն «Վալդայ» քննարկումների ակումբին:

ԵՄ-ի մշտական ներկայացուցիչների կողմից պատժամիջոցները հաստատվելուց հետո դրանց պետք է հավանություն տրվի ԵՄ-ի ավելի բարձր մակարդակով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Նարե Գրիգորի Ստեփանյանի դիպլոմը՝ տրված ՀՊՄՀ-ի կողմից 2016 թվականին:

Դիպլոմի սերիան եւ համարը՝ AB227720:

Համարել անվավեր:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ԲԱՆԿԸ՝ ԲԱՆԿԻՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ (BAFT) ԱՆԴԱՄ

«Յունիբանկն» անդամակցել է ֆինանսավորման եւ առեւտրի հարցերով բանկիրների ասոցիացիային (Bankers Association for Finance and Trade): BAFT-ին միանալով՝ «Յունիբանկն» ամրապնդում է իր հանձնառությունը միջազգային ծառայությունների զարգացման գործում, ներառյալ՝ առեւտրի ֆինանսավորումը, վճարային լուծումները եւ միջազգային փոխանցումները: Անդամակցությունը թույլ է տալիս բանկին դառնալ խոշորագույն միջազգային համայնքի մաս, մասնակցել ոլորտի առաջատար ձեւավորող ռազմավարական քննարկումներին, նաեւ իր ներդրումն ունենալ համաշխարհային առաջատար փորձի զարգացման գործում:

«Մենք ուրախ ենք միանալ BAFT-ին եւ ամրապնդել մեր գլոբալ ներկայությունը՝ շարունակելով բարձր մակարդակով բավարարել մեր հաճախորդների աճող պահանջմունքները եւ մատուցելով նրանց առաջատար ֆինանսական լուծումներ: Այս անդամակցությունն արտացոլում է միջազգային համագործակցությունն ընդլայնելու մեր շարունակական հանձնառությունը՝ կենտրոնանալով այնպիսի հիմնական ոլորտների վրա, ինչպիսիք են առեւտրի ֆինանսավորումը, համապատասխանությունը, թվայնացումը եւ վճարային համակարգերը», - նշեց «Յունիբանկի» վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը:

«Մենք ուրախ ենք ողջունել «Յունիբանկին»՝ որպես BAFT-ի նոր հայաստանյան անդամ, որը միացավ ավելի քան 65 երկրներում գործող 270 հաստատություններից բաղկացած մեր աճող համայնքին: Մենք անհամբեր սպասում ենք «Յունիբանկի» ակտիվ մասնակցությանը մեր հանձնաժողովների եւ ոլորտային նախաձեռնությունների աշխատանքներին», - ասաց BAFT-ի նախագահ եւ գործադիր տնօրեն Թոդ Բարվելը:

BAFT-ին անդամակցությունը բացում է փորձի փոխանակման, կրթական ռեսուրսներին, վերլուծական նյութերին եւ փորձագիտական գիտելիքներին հասանելիության լայն հնարավորություններ, ինչպես նաեւ նպաստում է դիրքերի ամրապնդմանը համաշխարհային ֆինանսական համայնքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՎԱԾՆԵՐ՝ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹՄՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը հաստատել է, որ չի հրաժարվում Լատինական Ամերիկայի ցամաքային տարածքներում թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի ծրագրերից:

«Եվ հիմա մենք դա անելու ենք ցամաքում: Որովհետեւ ցամաքում դա ավելի հեշտ է», - ասել է Թրամփը՝ Փենսիլվանիայում տնտեսության մասին ելույթի ժամանակ:

Նա հիշեցրել է, որ «յուրաքանչյուր կրակի տակ ընկնող նավի դիմաց մենք 20,000 ամերիկացու կյանք ենք փրկում»:

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը նաեւ հայտարարել է, որ Կարիբյան ավազանում նավերին հարվածող հրթիռային համակարգը նույնպես ուղղված է Սոմալիի դեմ:

«Մենք նույն համակարգն ունենք Սոմալիի դեմ», - ասել է Թրամփը:

Նա նշել է, որ եթե Սոմալիի բնակիչները ցանկանան «հարձակվել մեր նավերի վրա», ԱՄՆ-ն կօգտագործի այս հրթիռային համակարգը:

Ամերիկացի առաջնորդը Սոմալին անվանել է «աշխարհի ամենավատ երկիրը»՝ պնդելով, որ «նրանք ո՛չ բանակ ունեն» եւ ո՛չ էլ խորհրդարան:

«Նրանք չգիտեն, թե ինչ է նշանակում խորհրդարան: Նրանք ոչինչ չունեն: Նրանք ոստիկանություն չունեն: Նրանք իրենք են ոստիկանություն պահում: Նրանք անընդհատ միմյանց են սպանում», - հավելել է Թրամփը:

Ավելի վաղ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահն արդեն հայտարարել էր, որ երկիրը պատրաստ է շուտով սկսել հարվածներ հասցնել այն թմրավաճառներին, որոնք թմրանյութեր են մատակարարում ԱՄՆ, ոչ միայն ծովում, այլեւ ցամաքում:

«Այդ մարդիկ անցյալ տարի ավելի քան 200 հազար մարդու են սպանել, բայց այժմ այդ թվերը զգալիորեն ցածր են: Եվ դրանք ցածր են, որովհետեւ մենք հասցնում ենք այդ հարվածները (ծովում) եւ մենք դրանք կհասցնենք նաեւ ցամաքում», - ասել է Թրամփը կառավարության կաբինետի նիստում դեկտեմբերի 2-ին:

40 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ՝ ՄՓՄՁ–ՆԵՐԻՆ. «ԱԿԲԱ» ԲԱՆԿ

«Ակբա» բանկը Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ համագործակցությամբ Հայաստանում մեկնարկում է երիտասարդների կողմից հիմնված բիզնեսների ֆինանսավորման առաջին նպատակային ծրագիրը:

Ծրագրի շրջանակում «Ակբա» բանկը 40 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ կուղղի երիտասարդ ձեռներեցների կողմից ղեկավարվող միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին:

Տեղական արժույթով ֆինանսավորման հնարավորությունը երիտասարդ ձեռներեցներին թույլ կտա խուսափել արտարժույթի տատանման ռիսկերից եւ ներդրումները կատարել ավելի կանխատեսելի միջավայրում: Բացի ֆինանսավորումից, երիտասարդ ձեռներեցներին կտրամադրվեն նաեւ խորհրդատվական ծառայություններ՝ ուղղված մրցունակության բարձրացմանը, թվային գործիքների կիրառմանը եւ բիզնեսների երկարաժամկետ կայունությանը:

Ֆինանսավորման նոր հնարավորությունը նախատեսված է ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում գործող երիտասարդ ձեռներեցների համար:

Եվրոպական միությունն այս ծրագրին աջակցում է Եվրոպական կայուն զարգացման հիմնադրամի (EFSD+) միջոցով, որը ստանձնում է ֆինանսական հնարավոր առաջին կորստի ռիսկը:

«Ակբա» բանկը եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը համագործակցում են 2003 թվականից:

ՎԶԵԲ-ը Հայաստանում գործում է 1992 թվականից՝ իրականացված 232 ծրագրում ներդնելով շուրջ 2.6 միլիարդ եվրո՝ այդպիսով նպաստելով երկրի տնտեսության տարբեր ոլորտների զարգացմանը:

«Ակբա» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԵՐԹԱԿԱՆ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ»

ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ԳՈՂԱՑԵԼ ԵՆ ՄԱՏԻՍԻ ՈՒԹ ԱՇԽԱՏԱՆՔ

Սան Պաուլուի համալսարանական միջավայրի կարեւոր մշակութային կենտրոններից մեկում՝ Biblioteca Mnrio de Andrade գրադարանում, վերջերս արձանագրվեց աղմկահարույց գողություն: Զինված երկու անձինք ներխուժել էին գրադարան եւ հափշտակել ֆրանսիացի մեծագործ Անրի Մատիսի ութ փորագրություն, ինչպես նաեւ բրազիլացի նկարիչ Կանդիդո Պորտինարիի առնվազն հինգ աշխատանք:

Բրազիլացի պաշտոնյաների հաղորդմամբ՝ հարձակվողները սպառնացել էին այնտեղ գտնվող անվտանգության աշխատակցին եւ տարեց ամուսնական զույգին: Արվեստի արժեքավոր գործերը վերցնելուց հետո նրանք չեն փորձել փախուստի դիմել մեքենայով. պարզապես հեռացել են ոտքով՝ շարժվելով մոտակա մետրոյի ուղղությամբ:

Գողերը գրադարան էին մտել կիրակի օրը՝ առավոտյան ժամը 10:00-ին՝ օգտագործելով գլխավոր մուտքը, եւ նույն ճանապարհով էլ դուրս էին եկել՝ առանց որեւէ խոչընդոտի:

Այս միջադեպը տեղի ունեցավ մշակութային աշխարհի համար ծանր ժամանակաշրջանում՝ ընդամենը մի քանի շաբաթ անց այն աղմկահարույց գողությունից, որը ցնցեց Լուվրը:

Biblioteca Mnrio de Andrade գրադարանը Բրազիլիայի երկրորդ ամենամեծ գրադարանն է: Պաշտոնյաների խոսքով՝ շենքում տեղադրված էին նաեւ դեմքի նույնականացման համակարգով աշխատող տեսախցիկներ, ինչը կարող է զգալիորեն օգնել հանցագործների ինքնությունը պարզելու գործում:

Արվեստաբանների կարծիքով՝ հատկապես Մատիսի գողացված փորագրությունների արժեքը «անհաշվելի» է: Մատիսը համարվում է 20-րդ դարի ամենաազդեցիկ արվեստագետներից մեկը, իսկ Պորտինարին՝ բրազիլական մոդեռնիզմի առանցքային դեմքերից:

Հիշեցնենք, որ Լուվրում նույնպես գողություն էր տեղի ունեցել հոկտեմբերի 19-ին:

Երբ ժամը 9:00-ին թանգարանը բացվել էր այցելուների համար, ընդամենը կես ժամ անց աշխատանքային համազգեստով գողերը մոտեցել էին բեռների տեղափոխման համար նախատեսված սայլին՝ այն կանգնեցնելով թանգարանի մուտքի մոտ: Նրանք տեղադրել էին երթեւեկությունը սահմանափակող նշաններ՝ ստեղծելով շինարարական աշխատանքների պատրանք:

Երկու գող սանդուղք էին բարձրացրել, հասել պատշգամբին եւ ներս մտել թանգարան՝ բաց պատուհանով:

Ժամանակագրությունը եղել է հետեւյալը.

• 9:34 - Գողերը ներխուժել են Ապոլոնի պատկերասրահի հարավային հատված: Անվտանգության կառավարման կենտրոնում միաժամանակ գործել է ազդանշանը, իսկ հերթապահ աշխատակիցը ռադիոկապով տեղեկացրել է հրամանատարական խմբին:

• 9:35 - Նրանք կտրիչներով բացել են երկու ցուցափեղկերի ապակիները եւ գողացել թանկարժեք զարդերը: Անվտանգության աշխատակիցները սկսել են այցելուների տարհանումը: Թանգարանի տնօրենը անհապաղ կապ է հաստատել ոստիկանության հետ՝ խնդրելով արագ միջամտություն:

• 9:36 - Համանատարական կենտրոնի ղեկավարն ակտիվացրել է հատուկ ազդանշանային համակարգը՝ ուղղակի կապ հաստատելով Փարիզի ոստիկանության գլխավոր վարչության հետ:

• 9:37 - Թանգարանի բոլոր աշխատակիցներին ուղարկվել է հաղորդագրություն՝ մուտքերը փակելու պահանջով:

• 9:38 - Գողերը կրկին դուրս են եկել նույն պատուհանով, միացել երկու սպասող համախոհներին եւ փախել դեպի արեւելք՝ սկուտերներով: Նրանցից մնացել էր դեղին բաճկոն՝ շինարարական հագուստ, ինչպես նաեւ գործիքներ, այդ թվում՝ կտրիչ:

Օրվա երկրորդ կեսին թանգարանի մոտակայքում հայտնաբերվել էր Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի կնոջ՝ կայսրուհի Եվգենյայի թագը՝ զմրուխտներով եւ շուրջ հազար երեք հարյուր ադամանդով զարդարված: Սակայն գողերը իրենց հետ տարել էին եւս ութ պատմական անգնահատելի արժեք ունեցող առարկա:

Ավելի ուշ կասկածյալները հայտնաբերվել էին, եւ երկու տղամարդ խոստովանել էին կատարած արարքը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ԼԻՎԵՐՊՈՒԼԻ ԴԵՄ ԽԱՂԻ ՄԱՍԻՆ

Չեմպիոնների լիգայի խաղարկության լիգայի փուլի վեցերորդ տուրում Միլանի «Ինտերը» սեփական հարկի տակ նվազագույն հաշվով պարտվեց «Լիվերպուլին» (0:1):

Խաղից հետո հանդիպման վերաբերյալ կարծիք է հայտնել Հայաստանի ազգային հավաքականի բոլոր ժամանակների լավագույն ռմբարկու, միլանյան ակումբի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը:

«Ցավալի է պարտվել այսպես՝ 11-մետրանոցի պատճառով: Առհասարակ, դժվար է հասկանալ նման 11-մետրանոցները, դժվար է ընդունել, երբ ամբողջ խաղն անցել է պայքարում: Բայց պետք է գլուխը բարձր պահել, առաջ նայել, ավելի շատ աշխատել՝ փորձելու համար փոխել իրավիճակը»,- ասել է Մխիթարյանը Sky Sport-ի հետ զրույցում:

Չեմպիոնների լիգայի խաղարկության յոթերորդ տուրում Մխիթարյանը կհանդիպի իր նախկին ակումբին՝ «Արսենալին»: Այդ հանդիպումը կկայանա հունվարի 20-ին՝ Երեւանի ժամանակով 00:00-ին:

ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԵՔ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

«Բարսելոնայի» 18-ամյա հարձակվող Լամին Յամալը տեւական ժամանակ կրում էր աշխարհի ամենաթանկ ֆուտբոլիստի տիտղոսը: Նա դեռեւս պահպանում է այդ դիրքը, սակայն նրա առաջատարությունն այլեւս միանձնյա չէ: Հեղինակավոր Transfermarkt պորտալի տվյալներով՝ այժմ 200 միլիոն եվրո արժեք ունեն ոչ միայն Յամալը, այլեւ Էրլինգ Հալանդը: «Մանչեսթեր Սիթիի» նորվեգացի ռմբարկուի տրանսֆերային արժեքը աճել է եւս 20 միլիոն եվրոյով: Աշխարհի ամենաթանկ խաղացողների վարկանիշում երրորդ տեղը կիսում են Մադրիդի «Ռեալի» աստղեր Ջուդ Բելինգհեմը եւ Կիլիան Մբապեն: Նրանց տրանսֆերային ներկայիս արժեքը կազմում է 180 միլիոն եվրո: Հավանաբար առաջիկա օրերին այդ գնային պիտակները եւս կարող են փոխվել:

Մոլորակի ամենաթանկարժեք ֆուտբոլիստների հնգյակը ներկայումս եզրափակում է «Ռեալի» մեկ այլ խաղացող՝ Վինիսիուս Ժունիորը, որի տրանսֆերային արժեքը գնահատվում է 150 միլիոն եվրո:

ՋԻՋԵԼ Է ԴԻՐՔԵՐԸ

UFC 323 մրցաշարի ավարտից հետո կազմակերպությունը թարմացրել է անկախ քաշային կարգերի վարկանիշային աղյուսակը, որտեղ տեղի են ունեցել էական փոփոխություններ:

Աղյուսակի առաջատարի դիրքը շարունակում է պահպանել Իսլամ Մախաչեւը, իսկ երկրորդ հորիզոնականում Իլիա Թոփուրիան է: Լավագույն եռյակ է բարձրացել Խամզատ Չիմաեւը:

Վարկանիշային անկում է գրանցել Մերաբ Դվալիշվիլին: Պետր Յանի հետ ռեւանշ մենամարտում կրած պարտությունից հետո վրացի մարզիկը նահանջել է եւ այժմ զբաղեցնում է 8-րդ հորիզոնականը:

Հայաստանը ներկայացնող Արման Ծառուկյանը նահանջել է երկու աստիճանով եւ այժմ գտնվում է 15-րդ տեղում:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նկարիչների միջազգային օրվա առթիվ կազմակերպված «Սալոն 2025» ցուցահանդեսում ներկայացված են Հայաստանի նկարիչների միության երիտասարդ եւ ավագ սերնդի անդամների յուրահատուկ, խորիմաստ ու հետաքրքիր աշխատանքները՝ գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ:

Վառ գույներով հարուստ ցուցադրությունը բացվեց դեկտեմբերի 8-ին Հայաստանի նկարիչների միությունում:

Միության նախագահ Սուրեն Սաֆարյանը շնորհավորեց բոլոր նկարիչներին մասնագիտական տոնի առթիվ եւ հիշեցրեց, որ տարեսկզբին իրենց առաջ խնդիր են դրել վերանորոգել, վերազինել Արա Սարգսյանի անվան ցուցասրահը, ինչը իրենց հաջողվել է:

Սաֆարյանը պատմեց, որ վերանորոգման աշխատանքները սկսելու օրը պատասխանատու վարպետները չեն եկել, ինչի պատճառով նկարիչները համախմբվել են եւ իրենց սեփական ուժերով եւ սեղմ ժամկետներում կարողացել են կարգի բերել ցուցասրահն ու այն պատրաստել «Սալոն 2025»-ին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը եւս միացել էր շնորհավորանքներին՝ նորանոր նվաճումներ մաղթելով նկարիչներին:

Նա ընդգծել է, որ վերջին շրջանում մի քանի անգամ այցելել է միություն հայ եւ օտարազգի հեղինակների համատեղ ցուցադրություններին եւ տպավորվել է: «Այսօր ցուցասրահում ներկայացված է մեր ստեղծագործական ներուժը՝ սկսնակ եւ փորձառու նկարիչների աշխատանքներ, որոնք աշխատում են տարբեր ոճերում եւ միասնաբար ասում, թե ինչ նկարչական արվեստ ու հզոր մշակույթ կա Հայաստանում»,-նշել է փոխնախարարը:

Դանիելյանի խոսքով՝ ոլորտում առկա են խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել: Նա առաջնային խնդիրներից է համարել Հայաստանի նկարիչների աշխատանքները պատշաճ կերպով միջազգային հարթակներում ներկայացնելու անհրաժեշտությունը: «Նախարարությունն այդ ուղղությամբ արդեն քայլեր է ձեռնարկել. ամիսներ անց մենք կունենանք աճուրդի տուն, որտեղ ցանկացած արվեստագետ կարող է իր գործն աճուրդի միջոցով վաճառել: Այդ աճուրդի տունը կհամագործակցի աշխարհի լավագույն աճուրդի տների հետ, որպեսզի հնարավոր լինի կապ ապահովել Հայաստանի եւ արտերկրի միջեւ: Նախատեսում ենք առավել ուժեղացնել մեր կուրատորական դպրոցը, որպեսզի համադրողները կարողանան օգնել մեր արվեստագետներին իրենց աշխատանքների հանրահռչակման գործում»,-ընդգծել է Դանիելյանը:

Ըստ փոխնախարարի՝ նախանձելի է աշխարհը, բնությունն ու Հայաստանը տեսնել նկարչի աչքերով, քանի որ նրանք նկատում են այն, ինչն անզեն աչքով անհնար է տեսնել:

Նկարիչների միության աջակիցները ցուցադրության շրջանակում իրենց շնորհակալությունն են հայտնել նկարիչներին եւ նրանցից շատերին շնորհավորել խորհրդանշական նվերներով:

Ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ դեկտեմբերի 14-ը:

● *Դեկտեմբերի 12-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե որ փաստաթղթերը ապոստիլով վավերացման ենթակա չեն:

Սահակ Պետրոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ապոստիլով վավերացման ենթակա չեն՝

1) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների տված փաստաթղթերը,

2) առեւտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերը:

Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասու մարմինների՝ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ իրենց լիազորությունների շրջանակներում տրված փաստաթղթերը, որոնք վավերացված են ապոստիլով, Հայաստանի Հանրապետության տարածքում համարվում են վավեր, առանց հյուպատոսական վավերացման կամ այլ լրացուցիչ օրինականացման:

Վերը նշված փաստաթղթերի՝ ապոստիլով վավերացված լինելը պարտադիր է, եթե Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ Հայաստանի Հանրապետության միջազգային այլ պայմանագրերով վերացվել, պարզեցվել է օրինականացման ընթացակարգը, կամ փաստաթուղթն ազատվել է օրինականացումից:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապոստիլով չեն վավերացվում պաշտոնական այն փաստաթղթերը, որոնք ուղարկվում են «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային միացած ԱՊՀ անդամ երկրներ, ինչպես նաեւ Բուլղարիա, Լիտվայի եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված մի շարք այլ երկրներ: Եթե պետությունը Հաագայի կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը (լեգալիզացիա) կատարվում է հյուպատոսական ճանապարհով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է Հայ Եկեղեցին կոչվում Գրիգորյան կամ Լուսավորչական: Գուցե դատճառը Գրիգորյան օրացո՞ւյցն է:

Լիլիթ Մանուչարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ Առաքելական Եկեղեցին Լուսավորչական չէ՛: Եվ օրացույցն անվան հետ կապ չունի: Հարցը ռուսների քաղաքականության մեջ է:

Հայ Առաքելական Եկեղեցին քրիստոնեական հնագույն եկեղեցիներից մեկն է: Նրա հիմնադիրներն են Քրիստոսի սուրբ Առաքյալները՝ Թադեոսն ու Բարթողիմեոսը, որ դեռ առաջին դարում Հայաստանում քրիստոնեություն էին քարոզել: Արդեն այն ժամանակ Հայաստանում սկիզբ էին առել քրիստոնյաների առաջին համայնքները եւ տարածում գտել 2-3-րդ դարերում: Այսպիսով, դեռ մինչեւ Ս. Լուսավորչի օրերը, հայերն ունեին հավատացյալներ, քահանաներ ու եպիսկոպոսներ: Այդ մասին վկայում են ինչպես հայկական, այնպես էլ օտար պատմական աղբյուրները՝ Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, ինչպես նաեւ Սեբեոսը, Տերտուղիանոսը, Տատիանոսը, Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսը, Եվսեբիոս Կեսարացին, Դիոնիսիոս Աղեքսանդրացին եւ Օգոստինոս Երանելին:

19-րդ դարի առաջին կեսին, երբ Արեւելյան Հայաստանը միացվել էր Ռուսական կայսրությանը, 1836թ. կայսրական դիվանատունն ու Ռուս Ուղղափառ Եկեղեցին մշակեցին մի փաստաթուղթ, որ կոչվեց «Պոլոժենիե», կամ բառացի թարգմանությամբ՝ «Դրույթ Հայ Եկեղեցու մասին», որի համաձայն՝ Հայ Եկեղեցին կոչվում էր «Լուսավորչական»՝ ի պատիվ Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Հայաստանի առաջին մկրտիչ կաթողիկոս-հայրապետի: «Լուսավորչական» անվանումը 300 տարով կարճացնում էր Հայաստանի քրիստոնեական պատմությունը: Ռուսները դա արել են հատուկ նպատակով, որպեսզի մեզ ուղղափառ չկոչեն, որպեսզի ցույց տան, թե իբրեւ թե հայերն առաքելական ժառանգություն չունեն եւ հավատն ընդունել են միայն Ս. Գրիգոր Լուսավորչից: Սակայն եթե հետեւենք ժամանակի ռուսների տրամաբանությանը, ապա Ռուս Եկեղեցին պետք է անվանել Վլադիմիրական, քանզի նա էր «մկրտել» Ռուսիան:

Օրինությամբ՝ Տ. Ղեւոնդ աբեղա Հովհաննիսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մեր Եկեղեցին կոչվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի եւ պատկանում է Հնագույն Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Երեւանում տեղի կունենա լիբանանահայ հայտնի նկարիչ, այս յուրահատուկ կտավի հեղինակ Հրայր Դիարբեքիրյանի աշխատանքների ցուցադրությունը. այն կկրի «Արեւ» խորագիրը:

Ցուցահանդեսը կբացվի Latitude Art Space-ում (Աշտարակի մայրուղի 7/1): Նկարչի գործերը Երեւանում ցուցադրվելու են առաջին անգամ:

Ցուցահանդեսը կբացվի 2025 թվականի դեկտեմբերի 13-ին եւ կշարունակվի մինչեւ 2026 թվականի հունվարի 18-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 5 - 9 + 2 + 5
Կոտայքի լեռներ	- 5 - 8 + 2 + 4
Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 + 5 + 7
Գեղարքունիք	- 4 - 8 + 1 + 5
Լոռի	- 3 - 8 + 6 + 9
Տավուշ	0 + 3 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 5 - 9 + 1 + 4
Արագածոտնի նախալեռներ	- 2 + 3 + 4 + 8

Արարատ	+ 2 + 5 + 7 + 10
Արմավիր	+ 1 + 4 + 7 + 9
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 + 2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 1 + 4 + 7 + 9
Սյունիքի նախալեռներ	- 1 - 5 + 6 + 9
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 + 8 + 11
ԼՂՀ	+ 1 + 4 + 7 + 10
Երեւան	+ 3 + 5 + 6 + 7

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*